

Անդրադառնանք Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված այդ խմբերին՝ քննարկելով նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Մեթոդաբանությունը

Վերը նշված խնդիրները իրագործելու համար կիրառվել են մի քանի **մեթոդներ**: Աշխատանքը գլխավորապես կատարվել է նկարագրական և վերլուծական մեթոդների ներդաշնակ զուգակցմամբ: Միննույն ժամանակ կիրառվել են փաստերի համադրման համաժամանակյա և տարժամանակյա մեթոդները:

Վստահաբար կարող ենք ասել, որ ցանկացած երկում կիրառված հոմանիշները տվյալ հեղինակի խոսքի անհատականության, ոճի, նաև երկի գեղարվեստականության կարևոր վկայություններից են:

Գանձակեցու երկում գործածված հոմանիշները ներկայացնենք հետևյալ սկզբունքներով: Երկում արձանագրված չեն հոմանշային եռանդամ, քառանդամ, բազմանդամ շարքեր. կան միայն հոմանշային զույգեր: Ընդ որում, դրանց մեջ գերակշռում են զոյական հոմանիշներով զույգերը:

Բերենք մի քանի օրինակներ: «Գնալ եղև նմա եւ ի մեծի արքային Տրդատայ ի Հռոմ ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, եւ մեծ թագաւորին Կոստանդիանոսի, եւ սրբոյ հայրապետին Սեդրեստրոսի, դնել **ուխտս և դաշինս** ի մէջ իւրեանց» (11): «Սոքա սիւնք եկեղեցոյ եւ ամրափակ պարիսպք որդւոց նորա, **աշտանակք** լուսատուք եւ **ջահք** բորբոքեալք՝ ընդհանուր ծաւալելով ընդ ոլորտս տիեզերաց» (29): «Հռոմայեցիք ելին ընդ Թիրակ ի կողմանս ասիացւոց խնդրել **զքէն վրիժուց** տառապանաց քրիտոնէից ի սկիւթացւոց եւ ի պարսից հանդերձ Տաճկաստանաւ» (106): «Նստի ի վերայ **իշոյ եւ յաւանակի** յօրինակ եկեղեցոյ հրէից եւ հեթանոսաց» (127): «Ո՛չ երբէք եղեալ է **թագաւորացն** մերոց, կամ իշխանացն ի պէտս ճանապարհաց եկեղեցի: Հարցաներ եւ զայլ վարդապետսն, եւ նոքա ասացին նմա զայն, որ առ մեծագոր **արքային** Տրդատաւ վրանն եւ սեղանն, զոր շրջեցուցանէին յարքունական բանակին» (167):

Կան նաև բայական և ածականական հոմանիշների զույգեր, ինչպես՝

«Սոքա մանկանց դաստիարակք եւ երիտասարդաց բարի օրինակք, կուսանաց զարդք եւ ամուսնացելոց օրէնք, ծերոց **սփոփիչք** եւ տկարաց **մխիթարիչք** . . .» (27): «Վերստին **նորոգեցան** եկեղեցիք, եւ պայծառացան դասք պաշտօնէից: **Շինեցան** եւ նոր վանորայք եւ եկեղեցիք . . .» (164): Իսկ զօրն թաթար դարձաւ բազում աւարաւ եւ խնդութեամբ յաշխարհն

Աղուանից, ի կայս ձմերոցի իւրոյ, **յարգաւանդ եւ ի բերրի** դաշտն, որ կոչի Սուղան» (280): «Արարին եւ երգս իսաչի եւ եկեղեցոյ, եւ այլ տօնից տէրունականաց, եւ սրբոց ամենեցուն, ապաշխարութեան եւ ամենայն ննջեցելոց, **պէսպէսս եւ զանազանս**, որ մինչեւ ցայսօր պաշտի եկեղեցիս Հայաստանեայց» (30):

Ինչպէս երևում է վերը բերված օրինակներից, պատմիչի երկում վկայված հոմանիշ բառերը հիմնականում գործածված են հենց նույն նախադասության մեջ ու շատ դեպքերում միավորված են **«էւ»** շաղկապով:

Կան օրինակներ, որոնցում հոմանիշներից մեկը անվանական հարադրություն է, իսկ մյուսը արտահայտված է բառային մեկ միավորով, ինչպէս՝ **աշխարհն Աղուանից-Աղուանք (193), Ասորոց երկիր-Ասորիք (224), եբրայական ազգ-եբրայեցի (97), Հայոց աշխարհ (68)-Հայք (75), աշխարհն Վրաց (237)-Վիրք (240)** և այլն:

Ուսումնասիրվող երկում կան հոմանիշների օրինակներ, որոնցից մեկը բայական հարադրություն է, իսկ մյուսը՝ նրանից սերած համադրական բարդություն, ինչպէս՝ **ասպատակ սփռեն-ասպատակեն (94), երկիր պագանել (232)-երկրպագել (233)**:

Պատմիչի երկում վկայված են ոչ միայն բառային, այլ նաև դարձվածքային հոմանիշ միավորներ: Այսպէս՝ Գանձակեցին «վախճանվել» իմաստով գործածել է բազմաթիվ հոմանիշ դարձվածքներ, ինչպէս *մինչեւ ցկատարումն* (էջ 6), *հանգաւ ի Քրիստոս* (էջեր 13, 81), *փոխեցաւ առ Քրիստոս* (էջ 15), *փոխեցաւ ի Քրիստոս* (էջ 81), *փոխի ի կարգս հրեշտակաց* (էջ 34), *կատարեցաւ ի Քրիստոս* (էջեր 41, 81), *ելից զկենցաղս* կամ *ել ի կենցաղոյս* (էջ 94): «Սպանել» իմաստով գործածում է *ելոյծ ի կենցաղոյս* (էջ 94) դարձվածքը:

Հականշտությունը միջբառութային իրողություն է, որն արտահայտվում է գույգի անդամների միջև և բառազույգի շրջանակում էլ փակվում է²:

Արձանագրենք, որ Գանձակեցու երկում կան թե՛ նույնարմատ, թե՛ տարարմատ հականիշներ:

Նույնարմատ են հականշային գույգի՝ ժխտական նախածանցով կազմությունները, որոնք ժխտում, բացատում են նախորդի հատկանշային իմաստը: Հականիշների այս տեսակն անվանում են ժխտական³:

Ներկայացնենք Գանձակեցու երկում վկայված հականշային նույնարմատ այն գույգերից, որոնցում բաղադրիչներից մեկին ավելանում է ժխտական նախածանցը:

² Տե՛ս Ս.Աբրահամյան, Հայոց լեզու.բառ և խոսք, Ե., 1986, էջ 122:

³ Տե՛ս Էդ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառադիտություն, Ե., 1984, էջ 71:

Ապականացու-անապական (140), եղանելի-անեղանելի (140), չարչարելի-անչարչարելի (140), հաւատացեալ-անհաւատ (185), հարկելիք-անհարկելիք (339), անապուսելի-ապուսելիք (339), շարժուն եւ անշարժուն (353) և այլն:

Ինչպէս երևում է բերված օրինակներից, ուսումնասիրվող երկում վկայված նույնարմատ հականշային գույգերի օրինակները կազմված են ժխտական հականիշներ կազմելու գործում գրաբարում չափազանց կենսունակ **ան-** նախածանցով:

Տարարմատ հականիշները իրար հակադրվում են բառիմաստի ներհակությամբ: Գանձակեցու երկում հանդիպում են տարարմատ հականշության մի շարք օրինակներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը: **Հին եւ նոր (27), հեղգացելոց-ժրացելոց (28), տիւ եւ գիշեր (40), այրել-շիջուցանել (41), հակառակեալ-հնազանդեալ (47), աստուածային եւ մարդկային (123), մեծութիւն եւ փոքրութիւն (123), առաւելութիւն եւ նուագութիւն (123), սեր-ատելութիւն (173), արս եւ կանայս (295), երկնաւորք եւ երկրաւորք (300)** և այլն:

Հարկ ենք համարում արձանագրել, որ պատմիչի երկում վկայված թե՛ նույնարմատ և թե՛ տարարմատ հականշային գույգերը հաճախ գործածվում են հենց նույն նախադասության մեջ:

Բերենք մի քանի օրինակ:

Ո՛չ **մեծութիւն** եւ ո՛չ **փոքրութիւն**, ո՛չ **բարձրութիւն** եւ ո՛չ **խոնարհութիւն**, ո՛չ **առաւելութիւն** եւ ո՛չ **նուագութիւն**, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն համագոյ սուրբ երրորդութեան դաւանի, որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն, երկինք **երկնաւորօքն** եւ երկիրս **երկրաւորօքս**, **երեւելի** եւ **աներեւոյթ** արարածք՝ յառաջինն եղեալ արարչութեան (123): Լուսք յոմանց ի նոցանէ ասել, թէ Քրիստոս՝ մարմին համագոյակից մեզ, **թանձր**, **մահկանացու**, **չարչարելի**, **երկրային**, **ապականացու** եւ **եղանելի**, ո՛չ էտո ի կուսէն, այլ **անապական**, **անօսք**, **անչարչարելի**, եւ **անեղանելի**... (140):

Վերը նշված օրինակները վառ վկայությունն են այն բանի, որ հականշային գույգի՝ նույն նախադասության մեջ կիրառությունը չափազանց կարևորվում է ռճական տեսանկյունից. դա էլ ավելի ցայտուն է ընդգծում հակադրությունը և սաստկացնում իմաստը:

Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում կան նաև համանունների՝ ձևով նույն, իմաստով տարբեր բառերի օրինակներ, սակայն դրանք, ի տարբերություն հոմանիշների և հականիշների, անհամեմատ փոքր թիվ են կազմում:

Ակն¹ – «թանկագին քար», **ակն**² – «ակունք»

Հմնտ. 1. Քանզի բղխե՛լ ի հօրե իբր **յականն** անհատաբար, դադարե՛լ յաղբեր (332):

2. Առաքեաց եւ նա ընծայս և թագ գեղեցիկ՝ ոսկւով եւ **ակամբք** պատուականօք ընդելուզեալ... (158):

Այր¹ – «տղամարդ», **այր**² – «քարայր»

Հմնտ. 1. Աղաչեաց **այրն** զնոսա, զի խնդրեսցեն զնա յեպիսկոպոսէն (327):

2. Յորմէ փախստեայ եղեալ բազումք **յայրս** եւ ի փապարս (247):

Հանդերձ¹ – «միասին», **հանդերձ**² – «հագուստ»

Հմնտ. 1. Եկին առ մեծն Սահակ, զի նովաւ **հանդերձ** ամբաստան լիցին պարսից արքային... (32):

2. Տարան ի բաղանիսն եւ լուացեալ զնա, զգեցուցին նմա **հանդերձս** ականիս... (47):

Հարկ¹ – «տուրք», **հարկ**² – «անհրաժեշտություն»

Հմնտ. 1. Սա զօրացաւ յոյժ եւ հնազանդեաց զտիեզերս եւ ի **հարկի** կացոյց զաշխարհս ամենայն (356):

2. Իսկ փայտեղէնսն՝ զի յերկուց են, **հարկ** է երկաթեղէն բեւեռօք պնդել... (136):

Մարտ¹ – «ամիս», **մարտ**² – «կռիվ, պատերազմ»

Հմնտ. 1. Ապա քաղցր շնչմամբ մաքուր հոգին արձակեցաւ ի կապանաց ի մարմնոյն... յուր եւ տասն **մարտի**... (347):

2. Չոգաւ ի վերայ նոցա ի **մարտ** պատերազմի դանն Մանգու (378):

Տեսիլ¹ – «տեսք, կերպարանք», **տեսիլ**² – «տեսիլք»

Հմնտ. 1. Անդ էր տեսանել **տեսիլ** ողորմագին. առհասարակ կոտորեալք ծնողքն եւ ծնունդք ընդ նոսին դիզեալք ի վերայ միմեանց (259):

2. Իսկ միայնակեաց ոմն, Նոյ անուն, տեսանէր ի **տեսլեանն**, զի Ստեփանոս զգոզն արեամբ լի առաջի Փրկչին ունէր (74):

Տէր¹ – «աստուած», **տէր**² – «իշխան»

Հմնտ. 1. ...գոր եւ ասաց փրկիչն մեր եւ աստուած **տէր** Յիսուս Քրիստոս... (8):

2. Եւ Դաւիթ որ էր **տէր** Սիւնեաց սպանեալ եղեւ ի Մոզն գաւառի (74):

Ինչպէս երևում է բերված օրինակներից, Գանձակեցու երկուս վկայված համանունների նույն շարքի մեջ մտնող բառերը հիմնականում պատկանում են նույն խոսքի մասին: Կարող ենք արձանագրել նաև, որ դրանք բառային համանունների օրինակներ են, այսինքն՝ ձևով նույն, բայց իմաստով այնպիսի գույզեր են, որոնց միավորները բառույթներ են:

Հատկանշական է այն, որ ուսումնասիրվող երկուսն արձանագրված է համանունների մի զույգ, որի իմաստային երկու տարբերակն էլ փոխառություն են տարբեր լեզուներից:

Բրինձ¹ «հացագգիների ընտանիքին պատկանող բույս» (պարսկական փոխառություն) – **բրինձ²** – «իշխան, իշխանորդի» (ֆրանսիական փոխառություն)

Հմտ. 1. «Պահանջէին հարիր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր **բրինձ**, եւ ծնծատ, երեք տոպրակ. . .» (374): 2. «Թագաւորեցոյց զորդին իւր, զԷթում, մանուկ տիօք, ածեալ զնա այր դստերն Լեւոնի փոխանակ որդոյ **բրնձին**, զոր ըմբռնեալ եղին ի բանտի» (287):

Կարող ենք վստահորեն ասել, որ համանունության վերջին օրինակները բնորոշ են հենց միջին հայերենին:

Եզրակացություն

Ամփոփելով 13–րդ դարի հայ պատմագրության վառ ու նշանավոր ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառային կազմի ձևաիմաստային խմբերի քննությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Պատմիչի երկուսն վերը նշված խմբերի վկայված օրինակների զգալի մասն են կազմում հոմանիշներն ու հականիշները, անհամեմատ քիչ են համանունները. վկայված է համանունների 21 օրինակ:

2. Ուսումնասիրվող երկուսն վկայված են միայն հոմանշային երկանդամ շարքեր (48 շարք):

3. Կան ն՛ նույնարմատ (21 զույգ), և՛ տարարմատ (23 զույգ) հականիշների մի շարք օրինակներ:

4. Ներկայացված օրինակները վկայում են, որ պատմիչի երկուսն արձանագրված հոմանիշ, հականիշ և համանուն բառերը հիմնականում համագործածական բնույթի են, այսինքն՝ կարելի է ասել, որ երևույթները հիմնականում բնութագրվում են սպասելի հատկանիշներով:

5. Ինչպես երևում է բերված օրինակներից, պատմիչի երկուսն վկայված հոմանիշները, հականիշները և համանունները աչքի են ընկնում իմաստային ոլորտների բազմազանությամբ:

6. Գանձակեցու երկի բառային կազմը անվերապահորեն գրաբարյան է, սակայն մինևնույն ժամանակ փոքր ընդհանրություններ ունի պատմիչի ապրած շրջանի լեզվական ատաղձի հետ:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. բառ և խոսք, Ե., 1986:
2. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

3. Աղայան Է., Բարաբրնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:
4. Գանձակեցի Կ., Պատմութիւն հայոց, Ե., 1961:
5. Սուրիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971:

Лилит Акобян

Структурно-семантические типы слов в труде «История Армении»

Киракоса Гандзакеци

Заклучение

Ключевые слова и выражения: 13-ый век, историк, Киракос Гандзакеци, «История Армении», состав слова, структурно-семантические типы, синоним, антоним, омоним.

С точки зрения обобщения культурной панорамы каждой нации крайне необходимы выявление, всестороннее изучение и правильная оценка ценностей прошлого, что актуально и в науке. В плане комплексного изучения средневековых историографических произведений первостепенное значение приобретает лингвистический анализ.

В армянской средневековой историографической прозе важное место занимает историк, церковный и общественный деятель XIII века Киракос Гандзакеци. Благодаря активной деятельности вардапет Киракос Гандзакеци был хорошо известен и пользовался уважением в Армении и во многих вопросах играл важную роль. Его летописная заслуга состоит преимущественно из крупного историографического произведения «История Армении», в котором историк представляет глубокие, разносторонние знания.

Обобщая исследование структурно-семантических типов слов в труде «История Армении» выдающегося представителя армянской историографии 13-го века Киракоса Гандзакеци, мы пришли к следующим выводам:

1. В указанном труде большая часть примеров указанных типов – синонимы и антонимы, значительно меньше представлено омонимов (всего 21 лексема).
2. В исследуемом произведении выявлены только двучленные синонимические ряды (48 рядов).
3. В произведении есть примеры как однокорневых (21 пара), так и разнокорневых синонимов.

4. Представленные примеры являются ярким доказательством того, что синонимы, антонимы и омонимы в труде Гандзакеци относятся к общеупотребительной лексике, то есть можно утверждать, что явления в основном характеризуются с использованием ожидаемых свойств.
5. Приведенные примеры свидетельствуют о том, что синонимы, антонимы и омонимы в указанном произведении относятся к различным сематическим полям.
6. Лексический состав в произведении Гандзакеци относится к периоду грабара (древнеармянского языка) и имеет мало общего с языковым материалом того времени, когда жил историк.

Lilit Hakobyan

**Formal-semantic groups of the lexis of the work by Kirakos Gandsaketsi
"History of Armenia"**

Conclusion

Key words and expressions: 13th century, historian, Kirakos Gandzaketsi, "History of Armenia", word composition, semantic groups, synonyms, antonyms, homonyms

From the point of view of shaping the cultural context of each nation, it is necessary to identify the values of the past, to study them comprehensively and to evaluate them properly. This is also relevant in science. Linguistic analysis is widely used in the complex study of medieval historiographical works.

Kirakos Gandzaketsi, a 13th century historian, clergyman and public figure, has a valuable place in Armenian medieval historiographical prose. Due to his active work, Archimandrite Kirakos Gandzaketsi was well known and enjoyed respect in Armenia, playing a significant role in many issues. His bibliographic work is composed mainly of a large historical work, the literary work "Armenian History", in which the historian presents deep, comprehensive knowledge.

Summarizing the study of the semantic groups of word composition of the work "History of Armenia" by Kirakos Gandzaketsi, a bright and prominent representative of the Armenian historiography of the 13th century, the following conclusions have been drawn:

1. Synonyms and antonyms comprise a significant part of the investigated examples of the above-mentioned groups in the historian's book, and there are relatively few homonyms: 21 examples of homonyms have been identified.

2. Only homonymous binomial series (48 series) have been identified in the work investigated.
3. There are a number of examples of similar (21 pairs) and of different root (23 pairs) antonyms.
4. The examples introduced prove that synonyms, antonyms and homonyms presented in the historian's book are mostly collaborative in nature, i.e. it can be pointed out that the phenomena are mainly characterized by some expected features.
5. As is evident from the given examples, the synonyms, antonyms and homonyms in the historian's book stand out due to their variety of semantic fields.
6. The word composition of Gandzaketsi's work is unconditionally of Grabar origin, but at the same time it has some common features with the language structure of the period when the historian lived.

Խմբագրություն է ուղարկվել 25.03.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 11.04.2023թ.

Հրատարակման է հանձնարարվել 28.04.2023թ.